

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ապրիլի 14-ից 16-ը Իրանի Իսլամական Հանրապետություն  
(ք.Թեհրան) գործուղման արդյունքների մասին

### 1. Անունը, ազգանունը՝

Դավիթ Անանյան

### 2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

### 3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իրանի Իսլամական Հանրապետություն, ք.Թեհրան, ապրիլի 14-ից 16-ը

### 4. Հրավիրող կողմը՝

Իրանի մաքսային ծառայություն

### 5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղուման նպատակը «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրումն էր:

### 6. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում քննարկվել են ՀՀ-ի և ԻԻՀ-ի սահմանով անցնող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքը ճիշտ սահմանելու միջոցները, ինչպես նաև ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տվյալներով փոխանակման շուրջ համագործակցություն և փախադարձ օժանդակություն ձևերը, ինչը թույլ կտա արդյունավետ կերպով կազմակերպել սահմանով անցնող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը: Վերջիններս ամրագրվել են ստորագրված հուշագրում: Բացի այդ, խոսվել է հուշագրի դրական ազդեցության մասին ԻԻՀ-ից ՀՀ ներմուծման և ՀՀ-ից ԻԻՀ արտահանման ժամանակ մաքսային կանոնների խախտման դեպքերի բացահայտման, առկա խնդիրների առավել արագ և օպերատիվ լուծման վրա և կողմերի միջև առևտրի համար ստեղծվող առավել բարենպաստ պայմանների մասին՝ ուղղված մաքսատուրքերից, հարկերից և վճարներից խուսափելու դեմ պայքարին:

## **7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Բացի հուշագրի ստորագրման նպատակով ՊԵԿ նախագահի՝ Իրանի մաքսային ծառայություն ղեկավար Մեհդի Մերաշրաֆիի հետ հանդիպումը, կայացել է նաև երկկողմ հանդիպում Իրանի էկոնոմիկայի և ֆինանսների նախարար պրն. Ֆահրադ Դեջբասանդի հետ, որի ընթացքում քննարկվել են համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև ուրվագծվել են կողմերի միջև համագործակցության հնարավոր ուղղություններ:

Մասնավորապես անդրադարձ է կատարվել ապրանքաշրջանառության և ուղևորաշրջանառության ծավալների ավելացմանը, ՄԱԶԾ-ի աջակցությամբ Մեդրիի սահմանային անցման կետի վերակառուցմանը և ՄԱԶԾ-ի և ՀՀ ՊԵԿ-ի համատեղ ջանքերով կազմակերպվող միջազգային կոնֆերանսին, որի ընթացքում կքննարկվեն միջսահմանային մաքսային ընթացակարգերի հետ կապված հարցեր, ինչպես նաև Հայաստանը՝ Իրանի միջոցով, ԵՄ-ի, ԵԱՏՄ-ի, Չինաստանի և Հնդկաստանի շուկաների համար տարանցիկ և առևտրային միջացք դարձնելու համար անհրաժեշտ գերակա միջոցառումներին:

## **8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Այցի արդյունքում ստորագրվել է սույն հաշվետվության 5-րդ կետում նշված հուշագիրը:

## **9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Համաձայնություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը մաքսային ոլորտում՝ մասնավորապես e-TIR համակարգի ներդրման, SS ոլորտում փորձի փոխանակման, հետբացթողումային հսկողության ոլորտում փոխգործակցության ակտիվացման հարցերում և այլն:

## **10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**X**

---

18.04.2019թ.